

2007 թ.-ի II եռամսյակում ՀՀ-ում գործող բանկերի  
գործունեության համառոտ վերլուծությունը

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի 2007 թ.-ի II եռամսյակի գործունեության արդյունքները համեմատելով I եռամսյակի արդյունքների հետ, հեշտ է նկատել, որ II եռամսյակի ընթացքում զգալի աճ է գրանցվել գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով: Այսպես, ընդհանուր ակտիվները 2007 թ.-ի II եռամսյակի ընթացքում աճել են 6.7 %-ով կամ 38.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 609.9 մլրդ դրամ, ընդ որում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվների աճը կազմել է 0.4 % կամ 2.0 մլրդ դրամ, իսկ ակտիվների ծավալը 2006 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 480.2 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ ընդհանուր ակտիվները տարեկան (2006 թ.-ի հունիսի 30-ի համեմատ) կտրվածքով աճել են մոտ 27.0 %-ով կամ 129.7 մլրդ դրամով, ընդ որում տարեսկզբի համեմատ ընթացիկ տարվա I կիսամյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն աճել են 12.1 %-ով կամ 65.7 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ակտիվների աճը գերազանցել է 5.6 տոկոսային կետով: Ասվածին միայն ավելացնենք, որ վերը նշված և եռամսյակային և կիսամյակային աճերը հիմնականում պայմանավորված են եղել վարկային ներդրումների աճով:

Ընթացիկ տարվա II եռամսյակում վարկային ներդրումներն աճել են 13.6 %-ով կամ 36.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 0.2 %-ով կամ 188.0 մլն դրամով և եռամսյակի վերջում կազմել 98.0 մլրդ դրամ, հարկ է նշել, որ 2006 թ.-ի II եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 2.9 %-ով կամ 6.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 3.1 %-ով կամ 2.4 մլրդ դրամով: Միաժամանակ փաստենք, որ ընթացիկ տարվա II եռամսյակում վարկային ներդրումների աճն անցած տարվա II եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 5.9 անգամ կամ 30.6 մլրդ դրամով: Վարկային ներդրումների աճը տարեկան (2006 թ.-ի հունիսի 30-ի համեմատ) կտրվածքով կազմել է 38.2 % կամ 85.0 մլրդ դրամ, ընդ որում տարեսկզբի համեմատ I կիսամյակի ընթացքում ընդհանուր վարկային ներդրումները աճել են 20.9 %-ով կամ 53.2 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի վարկային ներդրումների աճը գերազանցել է 14.8 տոկոսային կետով: 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ վարկային ներդրումների իրական ծավալը կազմել է 307.7 մլրդ դրամ, որը կազմում է բանկերի ընդհանուր ակտիվների 50.45 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 50.5 %-ը կամ 155.4 մլրդ դրամ և այս ցուցանիշը II եռամսյակում աճել է 8.5 % կամ 12.1 մլրդ դրամով, իսկ կիսամյակային կտրվածքով՝ 17.4 %-ով կամ 23.0 մլրդ դրամով:

II եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերն աճել են 19.2 %-ով կամ 22.8 մլրդ դրամով, կազմելով 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 141.9 մլրդ դրամ, ընդ որում ֆիզիկական անձանց վարկերի կառուցվածքում 14.5 %-ով կամ 11.6 մլրդ դրամով աճել են սպառողական վարկերը, իսկ 28.3 %-ով կամ 7.6 մլրդ դրամով՝ հիփոթեքային վարկերը: Ընթացիկ տարվա II եռամսյակում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճն անցած տարվա II եռամսյակի նույնանուն ցուցանիշը գերազանցել է 7.8 տոկոսային կետով կամ 13.8 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ֆիզիկական անձանց վարկերը տարեկան (2006 թ.-ի հունիսի 30-ի համեմատ) կտրվածքով աճել են 61.7 % կամ 54.1 մլրդ դրամով, ընդ որում I կիսամյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերն աճել են 38.8 %-ով կամ 39.7 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի վարկերի աճը գերազանցել է 17.9 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ ավելացնենք, որ II եռամսյակի վերջում ընդհանուր վարկային ներդրումների 29.6 %-ը կամ 91.1 մլրդ դրամը կազմել են ազգաբնակչության սպառողական կարիքների համար առևտրային բանկերի կողմից ուղղված վարկային միջոցները, որը 2006 թ.-ի հունիսի 30-ի համեմատ աճել է 28.5 %-ով կամ 20.2 մլրդ դրամով, այդ թվում երկրորդ եռամսյակում աճել է 14.5 %-ով կամ 11.6 մլրդ դրամով, իսկ I-կիսամյակում՝ 23.5 %-ով կամ 17.3 մլրդ դրամով: Շարադրվածի հետ մեկտեղ նաև պետք է նշել, որ զգալի աճ է գրանցվել հիփոթեքային վարկերի գծով. տարվա կտրվածքով այն կազմել է 97.3 % կամ 17.0 մլրդ դրամ, I կիսամյակում՝ 46.6 % կամ 10.9 մլրդ դրամ, իսկ ընթացիկ տարվա II եռամսյակում՝ 28.3 % կամ 7.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համանուն ցուցանիշը գերազանցել է 3.6 մլրդ դրամով: Հիփոթեքային վարկային պորտֆելը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է 34.4 մլրդ դրամ կամ վարկային ներդրումների 11.2 %-ը:


Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալներն ապահովել են՝ «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 24.9 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 20.9 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը՝ 18.0 մլրդ դրամ, «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ը՝

11.6 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ մոտ 10.7 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում՝ «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը, որն ապահովել է՝ 19.9 մլրդ դրամ, այդ թվում հիփոթեքային վարկեր՝ 13.8 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 18.3 մլրդ դրամ (հիփոթեքային վարկեր 1.6 մլրդ դրամ), «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 15.9 մլրդ դրամ (0.07 մլրդ դրամ), «Հայէկոնոմբանկ»-ը՝ 12.9 մլրդ դրամ (2.0 մլրդ դրամ) և «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ը՝ 11.4 մլրդ դրամ (2.1 մլրդ դրամ): Համակարգում հիփոթեքային վարկերի գծով երկրորդ ցուցանիշն ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 6.0 մլրդ դրամ, ընդ որում II եռամսյակում «Յունիբանկ»-ը ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 2.3 մլրդ դրամ:

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից ամենամեծ ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 18.8 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 14.0 մլրդ դրամ:

2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ գործող բանկերի ակտիվների և վարկային ներդրումների ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ-ում գործող բանկերի ակտիվները և վարկային ներդրումները  
2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ



2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ-ում գործող բանկերի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 470.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 24.3 %-ով կամ 91.9 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշն ընթացիկ տարվա II եռամսյակում աճել է 5.8 %-ով կամ 26.0 մլրդ դրամով, ընդ որում նախորդ տարվա II եռամսյակում այն նվազել էր 0.3 %-ով կամ 1.0 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների տարեկան կտրվածքով՝ աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների՝ 15.3 % կամ 8.5 մլրդ դրամ և 45.2 % կամ 31.9 մլրդ դրամ համապատասխան ավելացումներով, որոնք եռամսյակի վերջում կազմել են համապատասխանաբար՝ 63.8 և 102.5 մլրդ դրամ, ընդ որում նշված ցուցանիշների տեսակարար կշիռներն ընդհանուր պարտավորություններում կազմել են 13.6 և 21.8 %:


II եռամսյակի կտրվածքով ցպահանջ պարտավորությունների ամենամեծ աճ գրանցվել է «ԱրմՍվիսԲանկ»-ի մոտ՝ 434.2 %, իսկ նվազում՝ «Հայբիզնեսբանկ»-ի մոտ՝ 53.1 %: Նույն ժամանակամիջոցում ժամկետային դեպոզիտների գծով բացարձակ մեծությամբ առավելագույն աճ արձանագրվել է «Արդշինհիմվեստբանկ»-ի կողմից՝ 9.8 մլրդ դրամ: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկն «Արդշինհիմվեստբանկ»-ն է՝ 32.4 մլրդ դրամ, այնուհետև նրան հաջորդում են «Յունիբանկ»-ը՝ 20.9 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը՝ 18.0 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 10.2 մլրդ դրամ և «ՎՏԲ-Հայաստան բանկ»-

ը՝ 10.16 մլրդ դրամ: Թվարկված բանկերից եռամսյակային կտրվածքով վերոհիշյալ ցուցանիշի լավագույն աճ ապահովել է «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 43.2 %:

Միևնույն ժամանակ կարելի է նշել, որ 2007 թ.-ի II եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ավանդներն (ցպահանջ և ժամկետային) ավելացել են 12.7 %-ով կամ 18.7 մլրդ դրամով՝ հունիսի 30-ի դրությամբ կազմելով 166.4 մլրդ դրամ, ընդ որում տարվա կտրվածքով ապահովվել է 32.1 %-ի կամ 40.4 մլրդ դրամի աճ: Հարկ է նաև նշել, որ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները II եռամսյակի ընթացքում ավելացել են 16.2 մլրդ դրամով կամ 18.8 %-ով, իսկ տարվա կտրվածքով՝ 31.9 մլրդ դրամով կամ 45.2 %-ով: Այս ցուցանիշի առավելագույն ծավալ եռամսյակի վերջում գրանցվել է «Յունիբանկ»-ի կողմից, ապահովելով 17.5 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 13.9 մլրդ դրամով, իսկ երրորդ տեղում է «Եյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը՝ 13.3 մլրդ դրամով: 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ֆիզիկական անձանց ավանդների (ցպահանջ և ժամկետային) տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում կազմել է 35.4 %, որը I եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 2.16 տոկոսային կետով:

2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ գործող բանկերի պարտավորությունների և ֆիզ. անձանց ավանդների (ցպահանջ և ժամկետային) ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ-ում գործող բանկերի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ



ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 9.5 %-ով կամ 12.1 մլրդ դրամով և II եռամսյակի վերջում կազմել 139.9 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակում աճել էր 3.1 %-ով կամ մոտ 3.1 մլրդ դրամով, իսկ 2006 թ.-ի հունիսի 30-ի նկատմամբ՝ 36.9 %-ով կամ 37.7 մլրդ դրամով: Բանկային համակարգում կուտակված շահույթը II եռամսյակի ընթացքում աճել է 6.0 %-ով կամ 2.0 մլրդ դրամով, եռամսյակի վերջում կազմելով մոտ 35.8 մլրդ դրամ, ընդ որում տարվա կտրվածքով ապահովվել է 58.5 %-ի կամ 13.2 մլրդ դրամի աճ: Միևնույն ժամանակ կարելի է արձանագրել, որ 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կուտակված շահույթի տեսակարար կշիռն ընդհանուր կապիտալում կազմել է 25.59 %, որը տարեսկզբի նույն ցուցանիշը գերազանցել է 1.6 տոկոսային կետով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական հիմնադրամը, երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 11.1 %-ով կամ 9.2 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի վերոնշյալ աճը գերազանցել է 3.0 տոկոսային կետով կամ 4.3 մլրդ դրամով: Տարվա կտրվածքով բանկերի

կանոնադրական հիմնադրամն ավելացել է 40.7 %-ով կան 26.7 մլրդ դրամով և հաշվետու եռամսյակի վերջում կազմել 92.1 մլրդ դրամ կան ընդհանուր կապիտալի 65.8 %-ը:

Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» բանկն է 6.43 մլրդ դրամ գումարով, բանկը 2007 թ.-ի II եռամսյակի ընթացքում ապահովել է 18.7 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ «Կոնվերս բանկ»-ը՝ 6.2 մլրդ դրամ (աճը 6.3 %), «Անելիք բանկ»-ը՝ 4.6 մլրդ դրամ (աճը 3.9 %), «Հայէկոնոմբանկ»-ը՝ 4.6 մլրդ դրամ (աճը 3.3 %) և «Ինեկոբանկ»-ը՝ 3.0 մլրդ դրամ (աճը 11.5 %): Հաշվետու եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը՝ 1.0 մլրդ դրամ:


Բանկերի թվում հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական հիմնադրամի համալրման գծով նշանակալից աճ է ապահովել «Պրոմեթեյ բանկ»-ը՝ 94.6 %, բանկի կանոնադրական հիմնադրամը հունիսի 30-ի դրությամբ կազմել է 7.2 մլրդ դրամ (աճը՝ 3.5 մլրդ դրամ):

2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 19.6 մլրդ դրամ, «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 13.1 մլրդ դրամ, «Կոնվերս բանկ»-ը՝ 10.2 մլրդ դրամ, «ՎՏԲ-Հայաստան բանկ»-ը՝ 9.4 մլրդ դրամ և «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»-ը՝ 9.4 մլրդ դրամ:

2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամը և կուտակված շահույթը/վնաս ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ-ում գործող բանկերի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամը և կուտակված շահույթը/վնասը 2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ

Մլրդ դրամ



ՀՀ-ում գործող բանկերի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 5.4 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմուն ցուցանիշը գերազանցել է 1.2 մլրդ դրամով կան 28.6 %-ով, նշվածին միայն ավելացնենք, որ I կիսամյակում ապահովվել է 10.1 մլրդ դրամի մաքուր շահույթ: 2007 թ.-ի II եռամսյակի ընթացքում վերոհիշյալ բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել են 32.7 %-ով կան 6.7 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 33.8 %-ով կան 5.2 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջում կազմելով համապատասխանաբար 27.1 և 20.6 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 6.5 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ

տարվա առաջին եռամսյակի համաձուլում ցուցանիշից ավելի է 27.4 %-ով կան 1.4 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա I կիսամյակի ընթացքում բանկերի կողմից ստացվել է 51.1 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 38.8 մլրդ դրամի ծախս, միաժամանակ նշենք, որ տարվա կտրվածքով (30.06.06-ից 30.06.07) ստացվել է 103.7 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 80.0 մլրդ դրամի ծախս: Սույն թվականի I կիսամյակում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարն «Արդշինհիմվեստբանկն» է համապատասխանաբար՝ 9.8 և 7.5 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ մոտ 2.3 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «Էյջ-Էս-Բի-Սի բանկ Չայաստան»-ը համապատասխանաբար ապահովելով 5.1, 2.8 և 2.3 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ բանկերն, առանց բացառության, 2007 թ.-ի II եռամսյակն ավարտել են շահույթով: I կիսամյակի կտրվածքով ստացված մաքուր շահույթի ծավալով առաջին տեղում է «Էյջ-Էս-Բի-Սի բանկ Չայաստան»-ը՝ 1.89 մլրդ դրամ, այնուհետև՝ «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 1.82 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 1.35 մլրդ դրամ և «Չայեկոնոմբանկ»-ը՝ 0.81 մլրդ դրամ:

2007 թ.-ի I կիսամյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 8.07%, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 1.83 %: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի ընթացքում ապահովել է «Էյջ-Էս-Բի-Սի բանկ Չայաստան»-ը՝ 22.74 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Զարգացման Չայկական Բանկ»-ը՝ 3.17 %:

Վերլուծական նյութում արտացոլված ցուցանիշները պարունակում են նաև բանկերի դուստր կառուցվածքների տվյալները:

2006-2007 թթ.-ի II եռամսյակների վերջում ԶԳ-ում գործող բանկերի հիմնական ցուցանիշների ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ԶԳ-ում գործող բանկերի ամփոփ ցուցանիշները

